Պարույր Սևակ

Փողոցներն են խաչվում իրար

Փողոցներն են խաչվում իրար և սրտիս հետ,
Փողոցները ծանոթ, և մտերիմ, և պարզ,
Որոնց տապը, փոշին և գաղտնիքն եմ կիսել
Եվ գաղտնիքս եմ տվել նրանց ի պահ:
Փողոցները այս նոր, ծառերը մայթամերձ
Եվ մայթերը իրենք՝ նրանց շուքի ներքո,
Որտեղ անծանոթին առաջարկել ենք մեզ,
Անձնատուր ենք եղել գեթ հայացքով:
Փողոցները և նոր, և հնօրյա-անցած,
Փողոցները՝ լցված հրաշքներով, փայլով,
Ուր իրիկվա մթնում սպասեցի երեկ,
Բայց դու չերևացիր քո կիսափակ քայլով:
Իրիկնային մայթում, իրիկնային մթնում
Սպասում եմ նորից քեզ մայթերի վրա,
Որոնում եմ ես քեզ, բայց զուր, քեզ չեմ գտնում
Ուրիշ-օտար կանանց դեմքի վրա,
Որոնք թեկուզ նույնպես հմայում են անձայն
Իրենց անհայտությամբ, օտարությամբ իրենց,
Սակայն նայել նրանց՝ ինձ թվում է հանցանք.
Եվ սպասում եմ քեզ, ինչպես եռանդ, երեկ…

17.5.1947 թ. 30.7. 1947թ.

Երևան Նավչալու